

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տեխնիկական գրություն #5

ՀԱՅԱՍՏԱՆ

Ժողովրդագրական փոփոխությունները և սոցիալական քաղաքականության ու աղքատության վրա դրանց հետևանքները¹

Հուլիս 2011



Մարդկային զարգացման ոլորտի ստորաբաժանում
Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջան
Համաշխարհային Բանկ

ՀԲ Տարածաշրջանի փոխնախագահ	Ֆիլիպ Հ. Լի Հուերու
ՀԲ գրասենյակի տարածաշրջանի տնօրեն	Ասադ Ալամ
Ոլորտի տնօրեն	Մամթա Մուրթի
Ոլորտի մենեջեր	Յեսկո Հենթել
Առաջադրանքը ստանձնած թիմի ղեկավար	Լիրե Էրսադո

¹ Այս գրությունը պատրաստել է Վիկտորիա Լևինը, աշխատանքին իրենց ներդրումն են ունեցել նաև Լիրե Էրսադոն (Ավագ տնտեսագետ, ECSH4), Օուեն Սմիթը (Ավագ տնտեսագետ, ECSH1), և Ալեքսան Հովհաննիսյանը (Խորհրդատու, ECSHD), ԱՄՆ-ի Զարգացման գործակալության /USAID/ PALM թիմը, և մասնավորապես, Սուսաննա Կարապետյանը, Հայաստանի կենսաթոշակային համակարգի վերաբերյալ PROST վերլուծությանը մասնակցելով:

Գործադիր ամփոփում

1. *Այս գրությունը ներկայացնում է Հայաստանի ժողովրդագրական փոփոխությունները և դրանց հետևանքները քաղաքականության վրա, և մասնավորապես՝ աղքատների վրա:* Հայաստանում այժմ արձանագրվում է բնակչության զգալի ծերացում և բնակչության թվաքանակի համապատասխան անկում. այս փոփոխություններն ունեն շատ հեռահար հետևանքներ: Հայաստանում կտրուկ կրճատվել է ծննդաբերությունների թիվը՝ 1950թ. մեկ կնոջ հաշվով 4.5 երեխայից այժմ այդ թիվը կազմում է 1.74 երեխա, ինչը զգալիորեն ցածր է այն վերարտադրողունակության ցուցանիշից, որը կապահովեր բնակչության թվի պահպանումը: Ակնկալվում է, որ Հայաստանի բնակչությունը, որ 1990թ.-ին կազմել է 3.5 միլիոն, կնվազի և 2050թ.-ին կհասնի 3 միլիոնի: Այս միտումը, համադրվելով նաև կյանքի ակնկալվող տևողության աճի հետ, կհանգեցնի տարեց բնակչության տոկոսային աճին և աշխատունակ տարիքի բնակչության թվի կրճատմանը: Այս գրությունը ներկայացնում է Հայաստանում ընթացող ժողովրդագրական փոփոխությունների ընդհանուր ուրվագիծը, ընդգծում է դրանց կապը սոցիալական ծախսերի հետ, և առաջարկում է քաղաքականության հարցերի շուրջ խորհրդածելու մի շրջանակ՝ միտված աշխատուժի մասնակցությանը, արդյունավետությանը, որ միանշանակորեն կհանգեցնեն Հայաստանի զարգացմանն ու աղքատության կրճատման ապահովմանը: Այս գրությունը չի ներկայացնում քաղաքականությանն ուղղված որոշակի առաջարկներ, փոխարենը, սակայն, ներկայացնում է այն ընդգրկուն ոլորտները, որտեղ հետագա վերլուծական աշխատանքի կատարումը կնպաստի ճշգրիտ քաղաքականության հնարավոր տարբերակների ձևավորմանը:

2. *Հայաստանի տազնապեցնող ժողովրդագրական փոփոխություններն ենթադրում են միջնաժամկետ առումով աճի, աղքատության կրճատման և ֆինանսական կենսունակության քաղաքականությունների միջև փոխզիջում:* Բնակչության մեջ տարեցների թվի ավելացումը կհանգեցնի կենսաթոշակների և հիմնականում տարեց շահառուներին ուղղված այլ ծրագրերի մասով ֆինանսական պարտավորությունների ավելացմանը: Այս ծախսերն անհրաժեշտ են, որ տարեցներին, որոնք կարող է չունեն եկամտի այլ աղբյուր, պաշտպանեն աղքատությունից: Սակայն, եթե ժողովրդագրական անցումը լավ չի կառավարվում, ապա տարեցների վրա կատարվող ծախսերի ավելացումը կարող է ամբողջովին կլանել ֆինանսական և վարչական ռեսուրսներն՝ այլ առաջնահերթ ոլորտներին զրկելով դրանցից, և վտանգել Հայաստանի տնտեսության զարգացման հեռանկարները: Հետևաբար, աշխատանքի արտադրողականության խթանումը և տարեցների կենսամակարդակի ապահովումը ճշգրտորեն հավասարակշռելը դառնում է կարևորագույն նպատակ՝ աղքատության հարատև կրճատման և երկարաժամկետ բարգավաճման ապահովման առումով: Այս գրությունն

անդրադառնում է քաղաքականությունների մի շարք ոլորտների, որ կարող են օգնել մեղմացնելու այն սահմանափակումները, որ կձևավորվեն առաջիկա մի քանի տասնամյակների ընթացքում ժողովրդագրական ուժերի ազդեցությամբ:

3. **Հայաստանի աշխատունակ տարիքի բնակչությունը սկսել է նվազել, և այդ թվի ավելի արագ անկման հեռանկարը լուրջ մարտահրավերի է վերածվում՝ ապագայում աշխատուժի պահպանման և աճի առումներով:** Այս խնդրի լուծման մի եղանակ կհանդիսանա այնպիսի քաղաքականությունների իրականացումը, որը միտված կլինի աշխատունակ տարիքի անձանց տեսակարար կշռի ավելացմանը, ովքեր կամ աշխատում են կամ էլ ակտիվորեն աշխատանք են փնտրում: Ներկայումս զբաղվածությունը Հայաստանում տղամարդկանց համար կազմում է 75%, իսկ կանանց համար՝ 60%: Այս ցուցանիշը տարածաշրջանի մյուս երկրներից շատերի համամատ լավ արդյունք է: Հայաստանում հաջորդ տասնամյակի ընթացքում ամբողջ աշխատուժի զարգացման հաշվարկները ցույց են տվել, որ 2008- 2012 թթ. ժամանակահատվածում աշխատուժը հավանական է կավելանա՝ 1.60 միլիոնից հասնելով շուրջ 1.66 միլիոնի, ապա կնվազի և 2020թ-ին կհասնի 1.62 միլիոնի: Վերջինի նվազեցումից հնարավոր կլինի խուսափել, եթե կառավարությունը կարողանա ապահովել բոլոր տարիքային/սեռային խմբերի աշխատուժի մասնակցության մակարդակի նույնիսկ փոքր և աստիճանական աճ (2008-2020 թթ. համար 2%): Սկզբունքորեն սրան հնարավոր կլինի հասնել ակտիվացնելով այն անհատներին, ովքեր արդեն աշխատուժից դուրս են, կամ էլ խրախուսելով ֆիզիկական անձանց շարժը՝ ոչ պաշտոնականից դեպի պաշտոնական զբաղվածության ոլորտ: Գործազրկության մակարդակը Հայաստանում բարձր է: 2009թ. տվյալներով 15 + տարիքի անձանց համար այն 18.5% էր, իսկ 15-24 տարիքային խմբի համար անհավանական 41%: Սա վկայում է, որ անհրաժեշտ է ուսումնասիրել աշխատաշուկայի ծրագրերի առկա վիճակը, ինչպիսիք են աշխատանք փնտրելու աջակցության և վերապատրաստման / ուսուցման ծրագրերը: Այլ ձեռացող երկրներն (մասնավորապես Եվրոպական երկրներն ու Միացյալ Նահանգները) օգտագործել են կենսաթոշակի անցնելու տարիքի սահմանման իրավասությունը, որպեսզի թե՛ խթանեն ակտիվ մասնակցության բարձր տեմպերը, և թե՛ նվազեցնեն կենսաթոշակային համակարգի ֆինանսական բեռը: Այս առումով, Հայաստանի կառավարությունն արդեն իսկ ձեռնարկել է հիշատակելի մեկ քայլ՝ սկսած 2006 թ.-ից կառավարությունը սկսել է աստիճանաբար բարձրացնել կանանց կենսաթոշակային տարիքը որպեսզի 2011թ.-ին այն հավասարվի տղամարդկանց կենսաթոշակային տարիքին՝ 63-ին: Եվ վերջապես, այս գրությունը նաև ներկայացնում է որոշ նախնական վկայություններ այն մասին, որ կանանց աշխատուժի մասնակցությունը կարող է սահմանափակված լինել երեխայի խնամք կամ խնամքի կարիք ունեցող անձանց համար մատչելի և որակյալ ծառայությունների ապահովման բացակայության պատճառով: Այս հարցը ավելի խորը վերլուծության կարիք ունի՝ նման ծառայությունների պահանջարկի և առաջարկի ուսումնասիրության առումով:

4. **Ի հավելում աշխատուժի մասնակցությունը խթանելուն Հայաստանի կառավարությունը կարող է նաև ակտիվ միջոցներ ձեռք առնել ուղղված աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:** Դրան կարելի է հասնել ավելի կրթված և ավելի ճկուն աշխատուժ ունենալով, տեխնոլոգիան ավելի արդյունավետ օգտագործելով, և ավելի լավ համադրելով աշխատողների հմտություններն ու տվյալ աշխատանքը: Այս գրությամբ ներկայացվող վերլուծությունը ցույց է տալիս, որ հետհանրակրթական կրթությամբ հայաստանցիները ավելի շատ են ներգրավված պաշտոնական ոլորտում, ինչը հայտնի է որպես ավելի արդյունավետ աշխատանք, քան ոչ-պաշտոնական ոլորտն է; այսպիսով, բարձրագույն կրթության ձեռք բերումը և ավելի որակյալ ուսումը կարող են արտադրողականության աճի հնարավոր կատալիզատորներ լինել: Հետագա ուսումնասիրության արժանի ոլորտները կարող են ներառնել մեծահասակների կրթության և ամբողջ կյանքի ընթացքում սովորելու հնարավորությունների ուսումնասիրությունը՝ որ պահպանեն և բարելավեն աշխատողների հմտությունները: Ի վերջո, գրությունը ներկայացնում է սոցիալական ծրագրերի վրա պետական ծախսերի վերլուծությունը՝ ըստ տարիքային խմբերի, որը բացահայտում է, որ Հայաստանի ամենաերիտասարդ քաղաքացիները մեկ շնչի հաշվով ստանում են ավելի քիչ ռեսուրսներ, քան որևէ այլ տարիքային խումբ: Սա հակասում է աճող միջազգային վկայություններին այն մասին, որ վաղ մանկության զարգացման հաջող ծրագրերը հանգեցնում են մարդկային կապիտալի վրա կատարված ներդրումների ամենաբարձր շահույթների ապահովմանը: Հաշվի առնելով ներկայիս ցածր ընդգրկվածության մակարդակը վաղ մանկության կրթական ծրագրերում, այնպիսի գործոնների գնահատումը, որոնք խոչընդոտում են վաղ մանկության զարգացման ծրագրերում ընդգրկվելուն (օրինակ՝ ծախսերի, որակի, հեռավորության) և այդ խոչընդոտների հաղթահարմանն ուղղված քաղաքականությունների ձևավորումը կարող են շատ օգտակար լինել:

5. **Հայաստանի ձեռացող բնակչությունը արդեն ճնշում է երկրի կենսաթոշակային համակարգին:** Շատ տնային տնտեսությունների համար կենսաթոշակներն անփոխարինելի եկամտի աղբյուր են և ձերտնական աղքատության դեմ զգալի արգելապատնեշ են հանդիսանում: 2009թ. տվյալների վրա հիմնված վերլուծությունը ցույց է տալիս, որ կենսաթոշակային փոխանցումների բացակայության դեպքում ընդհանուր աղքատության մակարդակը կբարձրանա 11.8 տոկոսով (35%-ից դառնալով 45.9%): Միաժամանակ, ֆինանսական ճնշումը Հայաստանի կենսաթոշակային համակարգի վրա բավականին լուրջ է՝ 2008թ.-ին կենսաթոշակային համակարգից կախվածության մակարդակը (թոշակատուների և ներդրում կատարողների հարաբերակցությունը) կազմել է 106%, ինչը շատ բարձր է համեմատած Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում այլ երկրների հետ: Ավելին, ներդրողների տարիքային պրոֆիլը Հայաստանում շեղված է դեպի ավելի տարեցների խումբը, ինչը կանխորոշում է նոր կենսաթոշակատուների աճող ալիք՝ հաջորդ 15 տարիների ընթացքում: Նոր կենսաթոշակային բարեփոխումների


ծրագիրն ընդունվել էր 2010 թ. դեկտեմբերին, և պետք է իրականացվի 2013 թ.-ին: Մնում է տեսնել, թե բարեփոխումներն ինչպես կանդրադառնան Հայաստանի կենսաթոշակային համակարգի նպատակներ հանդիսացող՝ կայունության ապահովման և եկամուտների աջակցման վրա: Ծերացող բնակչության ազդեցությունը առողջապահական ծախսերի վրա, կարծեք թե, Հայաստանում չի սպառնում համակարգի կենսունակությանը: Այլ շարժիչ ուժերը, ինչպիսիք են ապահովագրությունն ու տեխնոլոգիաները, ծախսերի աճի ավելի հավանական պատճառ են, քան այդ գործոնները կարելի է կառավարել զգուշավոր քաղաքականության ձևավորմամբ: Այսօր Հայաստանն իր հանրային առողջապահության համակարգի վրա չափավոր գումարներ է ծախսում, սակայն այդ ոլորտի մի քանի կարևոր բարեփոխումները (օրինակ ուղղակիորեն գրպանից կատարվող ծախսերի կրճատումը) շարունակում են մնալ առաջնահերթ:

I. Ներածություն

1. *Ներկայումս Հայաստանը ժողովրդագրական փոփոխությունների է ենթարկվում, որոնք կունենան հեռահար հետևանքներ քաղաքականության վրա-* Երկրի ժողովրդագրական փոփոխությունները տեղի են ունենում աստիճանաբար և հաճախ քաղաքականության ամենօրյա խորհրդածությունների ժամանակ դրանք նշանակալի կարևորության չեն արժանանում: Սակայն այդ միտումներին և դրանց ազդեցություններին տեղյակ լինելը կարևորվում է մի շարք տնտեսական և սոցիալական հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս: Քաղաքականությունների վերաբերյալ այս գրությունը (ա) ներկայացնում է Հայաստանում արձանագրվող էական ժողովրդագրական փոփոխությունները, (բ) ուսումնասիրում է դրանց ազդեցությունը աշխատանքային տարիքի և տարեց բնակչության խմբերի վրա, և (գ) անդրադառնում է սոցիալական ծախսերի և աղքատների կապին: Այս գրությունը չի ներկայացնում քաղաքականությանն ուղղված որոշակի առաջարկներ, փոխարենը, սակայն, ներկայացնում է այն ընդգրկուն ոլորտները, որտեղ հետագա վերլուծական աշխատանքի կատարումը կնպաստի ճշգրիտ քաղաքականության հնարավոր տարբերակների ձևավորմանը:

2. *Հայաստանում ժողովրդագրական փոփոխության հիմնական շարժիչ ուժերն են բնակչության թվի կրճատումը և ծերացումը:* Հայաստանում արդեն կտրուկ կրճատվել է ծննդաբերությունների թիվը՝ 1950թ. մեկ կնոջ հաշվով 4.5 երեխայից այժմ այդ թիվը կազմում է 1.74 երեխա, ինչը շատ ցածր է այն վերարտադրողունակության ցուցանիշից, որը կապահովեր բնակչության թվի պահպանումը: Այս միտումը, համադրվելով նաև կյանքի ակնկալվող տևողության աճի հետ, կհանգեցնի Հայաստանի ազգաբնակչության տարիքային կառուցվածքի աստիճանական փոփոխության, ըստ Գծապատկեր 1-ի (Գծապատկեր 1.): Այդ միտումների արդյունքում կարձանագրվի երկու ակնհայտ առանցքային ժողովրդագրական փոփոխություն՝ տարեց բնակչության թվաքանակի աճ և աշխատանքային տարիքի բնակչության թվաքանակի աստիճանական անկում:

Գծապատկեր 1: Ժողովրդագրական միտումները և քաղաքականության հիմնական հարցերը Հայաստանում



3. Գծապատկեր 1-ում ներկայացված բնակչության փոփոխությունները Հայաստանի աճի հեռանկարների և աղքատության կրճատման քաղաքականությունների վերաբերյալ կարևոր հարցեր են առաջադրում:

Ակնկալվում է, որ ավելի սակավաթիվ աշխատանքային տարիքի մարդիկ պետք է ապահովեն աստիճանաբար ավելացող տարեցների թվաքանակին: Քաղաքականություն ձևավորողները կարող են դիտարկել քաղաքականության մի շարք հարցեր: Դրանց թվում են՝ (i) ինչպես հավասարակշռել կյանքի ցիկլի տարբեր փուլերին ուղղված աղքատության կրճատման քաղաքականությունները, (ii) ինչպես ապահովել, որ ապագայի արդյունավետության բարձրացման օգուտները փոխլրացնեն աշխատանքային տարիքի բնակչության թվաքանակի աճի դանդաղեցումը և աստիճանական անկումը; և (iii) ինչպես պահպանել կենսաթոշակային և առողջապահական ծրագրերի ֆինանսական կենսունակությունը՝ տարեց բնակչության տեսակարար կշռի շարունակական ավելացման դեպքում:

4. Օերացող բնակչությունը Հայաստանի համար իրողություն է, որից հնարավոր չէ խուսափել, սակայն երկրի տնտեսական զարգացման ընթացքի վրա դրա հնարավոր բացասական ազդեցությունը մեղմելու առումով քաղաքականությունների ձևավորման համար զգալի տարածք կա: Քաղաքականության լծակներ կան՝ խթանելու համար մասնակցությունը աշխատաշուկային և բարձրացնելու արդյունավետությունը՝ դիմակայելու համար կախվածության հարաբերակցության

աճին; կրթական համակարգերը՝ ներառյալ նաև վաղ մանկական կրթությունը, հնարավորություն ունեն ամրապնդվելու, որ նպաստեն այդ աշխատանքների իրականացմանը, և քայլեր կարող են ձեռնարկվել որ կապահովվեն կենսաթոշակային և առողջապահական ծախսերի կենսունակությունը: Ավելին, այդ ակտիվ քաղաքականությունները դեպի բնակչության առավել խոցելի հատվածին ուղղորդելը, հավանական է, ամենամեծ ազդեցությունը կունենա ազգաբնակչության թե՛ ներկա, և թե՛ ապագա բարեկեցության աստիճանի վրա: Այս հարցերն ամփոփ ներկայացված են Աղյուսակ 1-ում/ Աղյուսակ 1.

Աղյուսակ 1- Հայաստանի ժողովրդագրական փոփոխության դիտարկումը աղքատության ոսպնյակի միջով

Ժողովրդագրական միտում	Քաղաքականության առանցքային մարտահրավերներ	Փոխկապվածություն սոցիալական քաղաքականություններին
Կրճատվող աշխատանքային տարիքի բնակչություն	Խթանել աշխատուժի մասնակցությունը	<ul style="list-style-type: none"> Աջակցել խնամող անձանց՝ մուտք գործելու պաշտոնական աշխատաշուկա Փոխկապակցել գործազուրկներին աշխատանքների հետ Բարձրացնել կենսաթոշակի տարիքները
	Բարձրացնել աշխատուժի արտադրողականությունը	<ul style="list-style-type: none"> Վաղ մանկության կրթություն Ամբողջ կյանի ընթացքում ուսուցում Աշխատաշուկայի ակտիվ ծրագրեր
Ավելացող տարեց բնակչություն	Պարունակում է կենսաթոշակային ծախսերի վրա ճնշում	<ul style="list-style-type: none"> Նպաստների մակարդակների, կենսաթոշակային տարիքի ընտրություն Համապատասխան փոխարինման մակարդակներ, սոցիալական թոշակներ
	Պարունակում է առողջապահական ծախսերի վրա ճնշում	<ul style="list-style-type: none"> Առավել հասանելի դարձնել առողջապահական ծառայությունները՝ կրճատելով գրպանից կատարվող ուղղակի վճարումները Ծառայության մատուցման բարեփոխումներ


5. **Գրությունը հետևյալ կառուցվածքն ունի.** Մաս II-ը ամփոփ ներկայացնում է Հայաստանում արձանագրվող նշանակալի ժողովրդագրական փոփոխությունները; Մաս III-ը ներկայացնում է աղքատության պրոֆիլը և սոցիալական ծախսերը՝ ըստ տարիքային խմբերի; Մաս IV-ը վերլուծում է Աղյուսակ 1 երկրորդ սյունակում թվարկված քաղաքականության հարցերը: Այդ մասերից յուրաքանչյուրը, կարևորում

Է աղքատության կրճատման մոտեցումը: Վերջին մասը ամփոփում է հիմնական
ասելիքը:


II. Ժողովրդագրական միտումներ

6. *Բնչպես Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում, բնակչության թիվը կրճատվում է: 1990թ.-ին Հայաստանի բնակչությունը կազմում էր 3.5 միլիոն, և ակնկալվում է, որ այդ թիվը կես միլիոնի չափով կկրճատվի մինչև 2050թ.-ն, ինչը 14%-ի անկում է (տես՝ Գծապատկեր 2/ Գծապատկեր 2): Այս անկումը համանման է հարևան Վրաստանում ակնկալվողին (15%), և փոքր ինչ պակաս է մեկ այլ հարևան երկրի՝ Ռուսաստանի ակնկալվող բնակչության կրճատումից (22%) (տես՝ Գծապատկեր 3/Գծապատկեր 3).*

Գծապատկեր 2: ՀՀ բնակչությունը՝ 1990-2050



Գծապատկեր 3: Բնակչությունը ՀՀ-ում և տարածաշրջանում, 1950-2050




Նշում.՝ “Արևելյան Եվրոպայի” մեջ են մտնում Բելառուսը, Բուլղարիան, Չեխիան, Հունգարիան, Սլովակիան, Լեհաստանը, Ռումինիան, Սլովակիան և Ուկրաինան:

7. *Հայաստանի բնակչության դինամիկան հիմնականում պայմանավորված է ծննդաբերությունների քանակով, ինչը անցյալ դարի երկրորդ կեսից ի վեր համապատասխանում է տարածաշրջանի այլ երկրների այդ միտումներին: Գծապատկեր 4/ Գծապատկեր 4/-ը ցույց է տալիս, որ 1950թ.-ին Հայաստանում մեկ կնոջ հաշվով ծնելիության մակարդակը կազմում էր 4.5 երեխա, ինչը Վրաստանի և Արևելյան Եվրոպայի այլ երկրների հետ համեմատած շատ ավելի բարձր ցուցանիշ էր: Սակայն 1960թ.-ից ի վեր, Հայաստանում բնական աճի տեմպերը կտրուկ կրճատվել են: Այն այժմ աննշան չափով ավելին է, քան տարածաշրջանային միջինը: Ակնկալվում է, որ հաջորդ մի քանի տասնամյակների ընթացքում այն կկայունանա մեկ կնոջ հաշվով մոտավորապես 2 երեխա ցուցանիշի վրա: Ի հավելումն դրա, Հայաստանից բնակչության արտագաղթի բարձր միտումներ կան, ինչը նպաստում է ոչ միայն բնակչության թվաքանակի կրճատմանը, այլ նաև տարիքային խմբերի*

կառուցվածքի փոփոխությանը: Վերջերս նաև Հայաստանում արձանագրվում է ծնունդների սեռերի հարաբերակցության շեղում՝ (մեկ իգական սեռի ծնունդին բաժին ընկնող արական սեռի ծնունդների քանակով); ներկայումս այս թիվը կազմում է 1.11, երբ Արևելյան Եվրոպայում 1.06 է, իսկ Արևմուտքում՝ 1.05: Այս ակնառու սեռային անհավասարության երկարաժամկետ հետևանքները դեռ պարզ չեն:²

Գծապատկեր 4: Ընդհանուր ծնելիությունը Հայաստանում և տարածաշրջանում, 1950-2050



Նշում.՝ «Արևելյան Եվրոպայի» մեջ են մտնում Բելառուսը, Բուլղարիան, Չեխիան, Հունգարիան, Մոլդովան, Լեհաստանը, Ռումինիան, Սլովակիան և Ուկրաինան:

8. **Կյանքի տևողության չափավոր աճը նույնպես նպաստել է Հայաստանի բնակչության դինամիկային**-Կյանքի տևողությունը Հայաստանում 1970թ.-ից ի վեր աճել է 70.8–ից հասնելով 73.7 –ի (կամ էլ 4%-ով), իսկ կանանց առումով փոքր ինչ ավելին է, քան տղամարդկանց: Այս դինամիկան համահունչ է Հայաստանի հարևան երկրների համանման զարգացումներին, սակայն շատ ավելի ցածր է Արևելյան Ասիայի կամ Լատինական Ամերիկայի երկրների ցուցանիշներից:³ Կյանքի տևողության առումով Հայաստանի դինամիկան բավականին անորոշ է, այն կախված կլինի Կառավարության և տնային տնտեսությունների կողմից առողջապահության ոլորտում և դրանից դուրս կատարվող ներդրումներից:


² Steu Meslé և այլք. (2007), որոնք սա վերագրում են լայն տարածում ունեցող պրակտիկային, որով երրորդ երեխայի ծննդից առաջ երեխայի սեռով պայմանավորված հղիության ընդհատումներ են կատարվում: Մեծերի շեղված հարաբերակցությունը դիտարկվում է որպես հնարավոր պատճառ Չինաստանի խնայողությունների բարձր մակարդակի համար (Wei and Zhang 2009):



³ Rajaratnam և այլք. (2010), «1970 – 2010թթ.-ին 15-59 տարեկան տղամարդկանց և կանանց մահացության մակարդակն ամբողջ աշխարհում (Worldwide mortality in men and women aged 15-59 years from 1970 to 2010: Համակարգված վերլուծություն),» *Lancet* 375: 1704-1720.

9. Ծնելիության անկումով և երկարակեցության աստիճանական աճով պայմանավորված որոշակի ժամանակահատվածում գրանցված ծնունդների ավելի փոքր խմբավորումները Հայաստանի կարևորագույն ժողովրդագրական միտումների՝ բնակչության անկման և բնակչության ծերացան հիմնական գործոններն են: Վերջին 60 տարիների ընթացքում Հայաստանում միջին տարիքը բարձրացել է շուրջ 10 տարով, 1950թ.-ի՝ 22.4-ից 2010թ.-ին՝ հասնելով 32-ի: Կանխատեսվում է, որ ծերացման ընթացքը ավելի է արագանալու և 2050թ.-ին միջին տարիքը կլինի 43-ը: Գծապատկեր 5/

10. Գծապատկեր 5/-ը ներկայացնում է չորս տարիքային խմբերի կանխատեսվող աստիճանական զարգացումը 1990-2050 թթ. ընթացքում, թե՛ բնակչության քանակի, և թե՛ մասնաբաժնի առումներով: Ակնկալվում է, որ այս ընթացքում 0-14 տարիքային խումբը/մասնաբաժինը/ կկրճատվի՝ 30% - ից հասնելով 17%-ի: Աշխատունակ տարիքի (15-64) տարիքային խմբի մասնաբաժինը ակնկալվում է որ 69% -ից կհասնի 62%-ի, ինչը 1990թ. մակարդակի համեմատությամբ 400 հազար մարդով պակաս է: Ի հակադրություն դրա, 65+, և հատկապես 80+ տարիքային խմբերի մասնաբաժինները զգալիորեն կավելանան:

Գծապատկեր 5: Հայաստանի տարիքային խմբերի աստիճանական զարգացումը 1990-2050թթ.






Source: UN

11. *Երիտասարդ տարիքային խմբերի կրճատման և տարեցների տարիքային խմբերի ավելացման միտումները կառաջացնեն կախվածության բարձր հարաբերակցություն, ինչն էական ազդեցություն կունենա քաղաքականությունների ձևավորման առումներով:* Կախվածության հարաբերակցության մի քանի տարվա անկումից հետո,⁴ Հայաստանն այժմ շրջադարձային կետում է.՝ ակնկալվում է, որ 2010թ.-ի համեմատ, երբ աշխատանքային տարիքի 100 անձին բաժին էր ընկնում 45 խնամառու/կախյալ անձ/, կախվածության հարաբերակցությունը 2050թ.-ին կկազմի 62 խնամառու՝ աշխատանքային տարիքի 100 անձի համար: Կախվածության հարաբերակցության դիտարկվող ընդհանուր պատկերը արտացոլում է կրճատվող ծնելիության դինամիկան: Նախատեսվող աճը ամբողջովին կլինի տարեցների կախվածության հարաբերակցության աստիճանական փոփոխության արդյունքում, քանի որ կանխատեսվում է, որ մանկական կախվածությունը խնամքից շարունակելու է կրճատվել: (տես Գծապատկեր 6/ Գծապատկեր 6).

⁴ Կախվածության ընդհանուր հարաբերակցությունը 0-14 տարեկան բնակչության և 65+ տարեկան բնակչության թվաքանակի հանրագումարի հարաբերակցությունն է 15-64 տարեկան բնակչության թվաքանակին: Մանկական կախվածության հարաբերակցությունը 0-14 տարեկան բնակչության թվաքանակի հարաբերակցությունն է 15-64 տարեկան բնակչության թվաքանակին: Տարեցների կախվածության հարաբերակցությունը 65+ տարեկան բնակչության թվաքանակի հանրագումարի հարաբերակցությունն է 15-64 տարեկան բնակչության թվաքանակին: Բոլոր հարաբերակցությունները ներկայացված են աշխատանքային տարիքի (15-64) 100 անձի հաշվով խնամառուների թվով:

Գծապատկեր 6: Հայաստանում ակնկալվող կախվածության հարաբերակցությունը 1990-2050



III. Աղքատության տարիքային պրոֆիլը և սոցիալական ծախսերը


12. *Բնակչության ծերացման մասին իրողությունը կարող է որպես մեկնակետ օգտագործվել ժողովրդագրական ոսպնյակի միջոցով աղքատության հաղթահարման քաղաքականությունների գնահատման առումով:* Այս բաժնում քննարկվում է աղքատության պրոֆիլն՝ ըստ տարիքային խմբերի (նախքան փոխանցումներն և դրանցից հետո) և սոցիալական ծախսերի պրոֆիլն՝ ըստ տարիքային խմբերի: Այն հանգեցնում է վերահաս երկրնտրանքի՝ թե ինչպես ճիշտ հավասարակշռել արտադրողականության բարձրացմանն ուղղված ներդրումների խթանումը՝ երիտասարդների համար, և աղքատության կրճատման աջակցությունը՝ տարեցների համար:

13. *Հայաստանում աղքատության պրոֆիլը պայմանավորված է նրանով, թե արդյոք մենք ղիտարկում ենք նախա-թե հետ-փոխանցումային թվերը:* Գծապատկեր 7/ Գծապատկեր 7/-ը ցույց է տալիս երկու մոտեցումների արդյունքները: 2009թ.-ին, ընդհանուր նախափոխանցումային աղքատությունը գրեթե 50% էր, սակայն բոլոր տարեցների համարյա երեք-քառորդը փոխանցումների բացակայության դեպքում կարող էին դասակարգվել որպես աղքատներ: Եթե փոխանցումները գումարվում են այդ հավասարմանը, ապա ընդհանուր աղքատության մակարդակը զգալիորեն


ընկնում է՝ հասնելով 34%-ի: Փոխանցումները ներառում են՝ կենսաթոշակների, գործազրկության նպաստների և սոցիալական օժանդակության ծրագրերի հատկացումները, ինչպիսիք են ընտանեկան նպաստի ծրագիրը և երեխաների նպաստը: Փոխանցումների ազդեցությունը աղքատության վրա շատ վառ է արտահայտվում տարեցների մոտ՝ այն 72,4% աղքատության մակարդակը կրճատում է, հասնելով 34,1%-ի: Այս ազդեցությունը մատնանշում է աղքատության կրճատման այն կարևոր դերը, որ կենսաթոշակներն ունեն չայաստանում:

Գծապատկեր 7: Աղքատությունը չայաստանում ըստ տարիքային խմբերի (փոխանցումներից առաջ և հետո)

Նախքան փոխանցումը




Փոխանցումից հետո



14. *Կենսաթոշակները եկամտի կարևոր աղբյուր են և էական արգելապատնեշ աղքատության դեմ՝ և ոչ միայն տարեցների համար.* Կենսաթոշակառուները կազմում են ամբողջ հայաստանցիների համարյա 15%-ը: Քանի որ, չայաստանում բարձր է մի քանի սերունդ միասին ապրելու ցուցանիշը, երկրի բոլոր տնային տնտեսությունների մոտ 53%-ն ունի առնվազն մեկ կենսաթոշակառու: 2009 թվականին կենսաթոշակները կազմում էին կենսաթոշակառու ունեցող տնային տնտեսությունների ընդհանուր ծախսերի մոտ մեկ քառորդը: Գծապատկեր 8-ը ցույց է տալիս, որ, թեև տարեցների աղքատության մակարդակը առավել բարձրանում է կենսաթոշակների բացակայության դեպքում, էականորեն բարձրանում է նաև երեխաների աղքատության մակարդակը (8 տոկոսային կետով):

Գծապատկեր 8: Հայաստանում կենսաթոշակների ազդեցությունը աղքատության վրա, ըստ տարիքի




15. *Ահագնացող ժողովրդագրական փոփոխությունները Հայաստանի կառավարությանը կմղեն գտնելու աղքատության նվազեցման կարճատև միջոցառումների (ինչպիսիք են թոշակները) և հայ երիտասարդներին ուղղված արդյունավետության բարձրացման երկարաժամկետ ներդրումների ճիշտ հավասարակշռությունը:* Սոցիալական ծախսերը տարանջատող վարժության վրա հիմնվելով, գծապատկեր 9/Գծապատկեր 9/ ցույց է տալիս սոցիալական ծախսերի ընթացիկ հաշվեկշիռը՝ ըստ ստացողի տարիքի: Այս հաշվարկը հիմնված է 2009 թ. կառավարության ծախսերի տվյալների BOOST շտեմարանից վերցված վարչական տվյալների (պատրաստված Համաշխարհային բանկի աշխատակիցների կողմից՝ Ֆինանսների նախարարության տվյալների օգտագործմամբ), և 2009 թ. Կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ILCS) վերլուծության վրա: Այս վարժության մեթոդաբանությունը նկարագրված է Ներդիր 1-ում: Կենսաթոշակները ներկայումս գերակա դիրք ունեն սոցիալական պաշտպանության այլ ծրագրերի հանդեպ: հաշվի առնելով նախորդ բաժնում ուրվագծված ժողովրդագրական փոփոխությունները, կարելի է ակնկալել, որ հաջորդ մի քանի տասնամյակների ընթացքում այս պատկերը դեռ ավելի շատ կշեղվի դեպի աջ:

16. *Ամենաերիտասարդ տարիքային խումբը ստանում է սոցիալական ծախսերի նվազագույն գումարը, ինչը չի չափավորում նրա չափից ավելի ներկայացվածությունը հետ-փոխանցումային աղքատների թվում-* Միայն տնտեսական աճը կարող է ապահովել Հայաստանին բավարար ռեսուրսներով՝ աստիճանաբար ավելացող տարեցների թվաքանակին կայուն օժանդակություն ապահովելու համար: Հետևաբար շատ ավելի են կարևորում հայ երիտասարդների արտադրողականության բարձրացմանն ուղղված ներդրումները: Միջազգային աճող

փորձը ցույց է տալիս, որ վաղ մանկության զարգացման հաջողված ծրագրերը մարդկային կապիտալի վրա կատարված ներդրումների վերադարձելիության առավելագույն մակարդակն են ապահովում: Նոր ձևավորվող գրականությունը ամուր կապ է բացահայտել վաղ մանկության փորձառությունների և կյանքի հետագա արդյունքների միջև այդ թվում նաև՝ կրթական ձեռքբերումների, զբաղվածության, առողջապահական:⁵ Իսկապես, որպես ընդհանուր կանոն գործող «որքան շուտ, այնքան լավ» սկզբունքն, ըստ երևույթին, ճշմարիտ է՝ այն ծրագրերի ազդեցության առումով, որ ուղղված են հմտությունների զարգացմանը: Հաջորդ բաժինը կուսումնասիրի քաղաքականության մի շարք ոլորտներ, որը կարող են դիտարկվել առաջիկա ժողովրդագրական փոփոխությունների համատեքստում:

Գծապատկեր 9: Հայաստանի սոցիալական ծախսերի տարիքային բաշխվածությունը



Ներդիր 1- Սոցիալական ծախսերի տարիքային պրոֆիլը կազմելու մեթոդաբանությունը

⁵ Տես, օրինակի համար, Almond և Currie (2010), «Մարդկային կապիտալի զարգացումը մինչև 5 տարեկանը» /“Human Capital Development before Age 5”/NBER.

Սոցիալական պաշտպանություն

Ուսումնասիրությունն իրականացնող թիմը օգտագործել է 2009 թ. ծրագրային մակարդակի պետական բյուջեի տվյալները՝ տարեկան ծախսերի ցուցանիշների (կենսաթոշակների, ծրագրի զուտ համախառն ներդրումների) մասով: Թիմը դիտարկել է երկու սցենար. (I) սոցիալական ծրագրերի անհատական հիմունքով ստացված եկամուտը (այսինքն՝ կենսաթոշակները, ինչպես նաև հաշմանդամության, հանրային ծառայությունների և գործազրկության նպաստները), տնօրինում է նպաստառուն՝ ինչպես ներկայացված է գծապատկեր 9-ում, և (ii) սոցիալական ծրագրերի անհատական հիմունքով ստացված եկամուտը հավասարաչափ բաշխվում է ընտանիքի անդամների միջև: Թիմն օգտվել է ազգային ներկայացուցչական տնային տնտեսությունների հետազոտությունից՝ (ILCS 2009) ուսումնասիրության նպատակով ձեռք բերելու համար յուրաքանչյուր ծրագրում ընդգրկված նպաստառուների տարիքային բաշխվածության տվյալները: Այն նաև հաշվարկել է Հայաստանի ընդհանուր բնակչության յուրաքանչյուր հինգ տարվա տարիքային խմբի մասնաբաժինը:

Համաձայն առաջին սցենարի, անհատական փոխանցումների վրա հիմնված եկամուտը (այսինքն՝ զուտ կենսաթոշակներ, հաշմանդամության նպաստներ և գործազրկության նպաստներ), որ հատկացվում է առանձին ստացողի տարիքային խմբին, և տարեկան մեկ շնչի հաշվով ծախսերը ստացվում են յուրաքանչյուր ծրագրի ընդհանուր ծախսերը բաժանելով տարիքային խմբի չափսի վրա:

Համաձայն երկրորդ սցենարի, անհատական փոխանցումների վրա հիմնված եկամուտը հավասարաչափ վերաբաշխվում է տնային տնտեսության ներսում, սա նշանակում է, որ եթե երկու կենսաթոշակառու ապրում են հինգ անձից կազմված տնտեսությունում, տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի հատկացվում է միջին կենսաթոշակային նպաստի 40%-ը, (այսինքն՝ երկու կենսաթոշակառուների միջին կենսաթոշակը հավասարաչափ բաշխվում է տնային տնտեսության անդամների միջև, ինչի արդյունքում յուրաքանչյուր անդամի բաժին է ընկնում միջին կենսաթոշակի նպաստի 40%-ը): Որպեսզի հաշվի առնվի Հայաստանում միջ-սերնդային տնային տնտեսությունների նշանակալի համամասնությունը այս սցենարով կենսաթոշակային որոշ ծախսեր վերապահվել են ավելի երիտասարդ տարիքային խմբերի, սակայն սոցիալական պաշտպանության ծախսերի հիմնական մասը շարունակում է հատկացված մնալ տարեցներին:

Կրթություն

Կրթության ծախսերի տարիքային պրոֆիլը կազմելու համար, ուսումնասիրության թիմը օգտագործել է 2009 թ. Բյուջեի տվյալները՝ կրթական յուրաքանչյուր մակարդակի համար, իսկ տարիքային խմբի չափսերը վերցված են 2009 թ. ILCS –ից: Յուրաքանչյուր կրթական մակարդակի համար, թիմը վերցրել է համապատասխան նորմատիվային

տարիքային սանդղակը (օր.՝ տարրական դպրոցի երեխաների ակնկալվող տարիքը 6-9 է) և/կամ ստուգել է հետազոտության հարցերին նրանց տված պատասխաններով նախորդ ուսումնական տարվա վերաբերյալ (այսինքն, մենք ակնկալում ենք, որ 2009 թ.-ին 7-10 տարեկան երեխաները դեռ 2008 թ.-ին հաճախել են տարրական դպրոց): Բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության դեպքում, թիմը միայն օգտագործել է կրթության վերաբերյալ հետազոտության հարցերին տրված պատասխանները:

Առողջապահություն

Առողջապահության ոլորտի ծախսերի տարիքային պրոֆիլը կազմելու համար ուսումնասիրության թիմն օգտագործել է 2009 թ. ILCS-ն՝ հաշվարկելու համար յուրաքանչյուր տարիքային խմբի համար մեկ շնչի հաշվով տարեկան ուղղակիորեն գրպանից կատարվող (ՈւԳԿ) ծախսերը (բացառելով այցերը մասնավոր առողջապահական հաստատություններ և դեղատներում կատարվող վճարումները): Քանի որ, ՈւԳԿ վճարումները կազմում են ընդհանուր առողջապահական ծախսերի մոտ երկու երրորդը, թիմը համարել է, որ ՈւԳԿ տարիքային պրոֆիլը համանման էր պետական առողջապահական ծրագրային ծախսերի շահառուների պրոֆիլներին: ՈւԳԿ տարիքային պրոֆիլը կիրառվել է 2009 թ. ընդհանուր պետական առողջապահական բյուջեի հանդեպ:

Նշում: Այս վերլուծության մեթոդաբանությունը հիմնված է Համաշխարհային բանկի (2010) իրականացրած նմանատիպ մի աշխատանքի վրա «Թուրքիա-Հնդկաստանում հնարավորությունները հաջորդ սերնդի համար; հաշվետվություն կյանքի հնարավորությունների մասին»

IV. Քաղաքականության հարցեր

IV.1 Աշխատուժի մասնակցության աճ, գործազրկության կրճատում, աշխատանքի արտադրողականության բարձրացում

17. *Աշխատանքային տարիքի կրճատվող բնակչությունը վեր է ածվում ակնհայտ մարտահրավերի՝ Հայաստանում աշխատուժի արդյունքների, պահպանման և բարելավման, ինչպես նաև աճի առումներով:* Հայաստանի Կառավարությունը կարող է դիտարկել այնպիսի քաղաքականություններ, որոնք ուղղված կլինեն (i) աշխատուժի մասնակցության բարձր ցուցանիշների ապահովմանը, (ii) պաշտոնական աշխատաշուկայի հետ ամուր փոխկապակցման զարգացմանը

(մասնավորապես աղքատների դեպքում), (iii) գործազուրկներին աշխատանքների հետ համադրելուն, և (iv) աշխատողների արտադրողականությունը բարձրացնելուն:

18. *Ընդհանուր առմամբ, Հայաստանում աշխատուժի մասնակցության ցուցանիշը շահեկանորեն տարբերվում է տարածաշրջանի այլ երկրների ցուցանիշից:* 15-64 տարիքային խմբի անձանց համար այդ ցուցանիշն այժմ կազմում է 75% տղամարդկանց համար, և 60% կանանց համար, ընդամենը շուրջ 67% (տե՛ս.՝ Աղյուսակ 2/ ցուցանիշներ:

19. **Աղյուսակ 2):** Այս ցուցանիշներն ավելի բարձր են, քան Եվրոպայում է, և համադրելի են իր հարևան երկրների՝ Վրաստանի և Ռուսաստանի ցուցանիշների հետ: Գծապատկեր 10 /

20. Գծապատկեր 10/ ցույց է տալիս, աշխատուժի մասնակցությունն ըստ տարիքային խմբերի՝ մեզ քաջաձանոթ Ս-կորագծի գլխիվայր շրջված տեսքով, որտեղ ամենաերիտասարդ ու ամենատարեց տարիքային խմբերն աշխատանքային շուկայում լինելու ամենաքիչ հավանականությունն ունեն։ Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից / ցուցանիշներ:


21. **Աղյուսակ 2/**, Աշխատանքի միջազգային կազմակերպությունը /ILO/ առաջիկա տասը տարիների համար կանխատեսում է աշխատուժի մասնակցության բավականին կայուն ցուցանիշներ:

Աղյուսակ 2- Հայաստանում և տարածաշրջանում աշխատուժի մասնակցության ցուցանիշները

Հայաստան- աշխատուժի մասնակցության ցուցանիշներ, 1990-2020				ԵԿԱ- աշխատուժի մասնակցության ցուցանիշներ, 2009			
	Տղամարդիկ	Կանայք	Ընդ.		Տղամարդիկ	Կանայք	Ընդ.
1990	77.9	60.9	69.0	Հայաստան	74.6	59.6	66.3
1995	72.0	56.4	63.6	ԵՄ-27	66.4	51.8	58.9
2000	72.4	57.2	64.1	ԵՄ-10	64.4	50.1	56.9
2005	73.3	58.6	65.2	Ռուսաստան	73.6	62.9	67.8
2010	74.9	59.8	66.6	Վրաստան	73.8	55.1	63.7
2015	75.5	59.9	66.9	Աղբյուրը՝ ԱՄԿ			
2020	73.3	57.5	64.6				

Աղբյուրը՝ ILO-Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ)

Գծապատկեր 10- Հայաստանում աշխատուժի մասնակցության ցուցանիշների տարիքային պրոֆիլը, 2009




Որոշ պարզ հաշվարկները ներկայացնում են, թե ինչ հնարավոր զարգացումներ կունենա աշխատուժի մասնակցությունը Հայաստանում տարբեր սցենարների դեպքում: Գծապատկեր 11-ը/

22. Գծապատկեր 11/ ցույց է տալիս աշխատուժի մասնակցության ԱՄԿ բազային սցենարը, համաձայն որի, 2008- 2012թթ. ընթացքում աշխատողների թիվը նախ կաճի 1.60 միլիոնից հասնելով 1.66-ի, ապա, կկրճատվի՝ 2020թ.-ին հասնելով 1.62 միլիոնի: Այդ անկումից հնարավոր կլինի խուսափել, եթե կառավարությունը կարողանա ապահովել Հայաստանի բոլոր տարիքային/սեռային խմբերի համար աշխատուժի մասնակցության նույնիսկ մի փոքր աստիճանական աճ (2%՝ 2008-2020թթ. ժամանակահատվածի համար): Եթե ՀՀ կառավարությունը շահագրգռված կլինի խթանել աշխատուժի ավելի բարձր մասնակցության աստիճանը, կարիք կլինի հետագայում խորը վերլուծություն կատարելու՝ որոշելու համար առավել արդյունավետ քաղաքականության միջոցները, որոնք կարող են օգտագործվել այդ նպատակին հասնելու համար: Այդ վերլուծությունը կներառնի ընթացիկ խոչընդոտների ուսումնասիրությունը, ինչպես աշխատուժի պահանջարկի, այնպես էլ առաջարկի առումներով, նաև այդ խոչընդոտների հաղթահարմանն ուղղված քաղաքականությունների տարբեր տարբերակների ծախսերն և օգուտները: Օրինակ, աշխատուժի մատակարարման վերլուծությունը կարող է կենտրոնանալ այնպիսի

խնդիրների վրա, ինչպիսիք են ակտիվացման և պաշտոնականացման խթանները՝ քննության առնելով Հայաստանում ոչ-պաշտոնական և ոչ-ակտիվ ներկա իրավիճակը և ուսումնասիրել, թե արդյոք աշխատանքի հարկման մակարդակը հնարավոր է ենթարկվի փոփոխությունների:

Գծապատկեր 11- Աշխատուժի մասնակցության կանխատեսումներն ըստ տարբեր սցենարների, 2008-2020



23. Այլ ծերացող երկրներում, (հատկապես Եվրոպայում և Միացյալ Նահանգներում) բարձրացրել են կենսաթոշակային իրավասության տարիքը՝ տարեցների մասնակցությունն աշխատուժին խթանելու և կենսաթոշակային համակարգի վրա ճնշումը նվազեցնելու նպատակով:

Աշխատողներին՝ ավելի երկար պաշտոնավարության խրախուսելն ունի երկու հիմնական օգուտ՝ (i) այն մեկ աշխատողի հաշվով հանգեցնում է ավելի շատ հարկային եկամուտների, և (ii) այն հետաձգում և ըստ էության նվազեցնում է այդ աշխատողի կախվածությունը կենսաթոշակային համակարգից: Կառավարությունն արդեն մեկ գովելի քայլ այս ուղղությամբ ձեռնարկել է՝ սկսած 2006 թ.-ից, կառավարությունը սկսել է աստիճանաբար բարձրացնել կանանց կենսաթոշակային տարիքը, որպեսզի այն 2011թ.-ին հավասարվի տղամարդկանց կենսաթոշակային տարիքին՝ 63: Սա խելամիտ քաղաքականություն է, հաշվի առնելով, որ կանանց կյանքի սպասվող տևողությունը յոթ տարով ավելին է, քան տղամարդկանց կյանքի սպասվող տևողությունը (համապատասխանաբար 77 և 70 տարի): Հենց որ

կենսաթոշակի անցնելու տարիքները կհավասարվեն, Կառավարությունը կարող է քննարկել կենսաթոշակային տարիքի աստիճանական բարձրացման և OECD երկրների միջինին՝ 65-ին հասցնելու ծախսերն ու օգուտները: Նման քաղաքականության ազդեցության գնահատումը **նախքան դրա իրականացումը** հնարավորություն կտա ուսումնասիրել տարեց աշխատողների աշխատուժի պահանջարկի կայունությունը, ինչպես նաև մոտիվացման քաղաքականությունները՝ ուղղված տվյալ տարիքային խմբի աշխատուժին շարունակական մասնակցությանը: Միացյալ Նահանգներն, օրինակ, օգտագործում է դրական և բացասական մոտիվացիաների համադրությունը՝ խրախուսելու համար հետաձգված կենսաթոշակի անցումը (i) մարդիկ, որ սահմանված կենսաթոշակային տարիքից շուտ են անցնում թոշակի (ներկայումս երկու սեռի համար էլ այդ տարիքը 66-ն է) տեսնում են, որ իրենց կենսաթոշակային վճարումները մշտապես նվազում են մոտ 6.7%-ով՝ 66 տարեկանի և իրենց իրական կենսաթոշակի անցման տարիքի տարբերության յուրաքանչյուր տարվա համար; (ii) մարդիկ, որ սահմանված կենսաթոշակային տարիքից ուշ են անցնում թոշակի ստանում են 8% ավելացում իրենց կենսաթոշակային գումարին՝ նախքան իրական կենսաթոշակի անցնելն ավելին աշխատած յուրաքանչյուր տարվա համար: Նման մոտիվացիաներ կազմելիս պետք է հաշվի առնել Հայաստանի աշխատաշուկայի առանձնահատուկ ենթատեքստը, ինչի համար էլ հետագա ուսումնասիրություն կպահանջվի:

20. Երեխաների խնամքի ծառայությունների բարելավված հասանելիությունը և մատչելիությունը կարող է օգնել ավելացնելու կանանց աշխատուժի մասնակցությունը: Պարզ ռեգրեսիվ վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկահասակ երեխաներ (0-5 տարեկան) ունեցող կանայք նույն տարիքի, կրթության և տնային տնտեսությունների կազմով, սակայն մանկահասակ երեխաներ չունեցող կանանց համեմատությամբ, տնտեսապես ակտիվ լինելու՝ 17% -ով ավելի քիչ հավանականություն ունեն: Այս արդյունքն ինչ-որ չափով կարող է պայմանավորված լինել կանանց մի մասի՝ չաշխատելու և երեխաներին մեծացնելու ընտրությամբ, սակայն, բայց մյուս մասի դեպքում, կարող է պայմանավորված լինել երեխաների որակյալ խնամքի հնարավորությունների բացակայությամբ: Համաձայն 1996 թ. «Տեղական ինքնակառավարման մասին» Օրենքի, վաղ մանկության զարգացման (ECD) ծրագրերի ֆինանսավորման պատասխանատվությունն արդեն փոխանցվել է տեղական ինքնակառավարման մարմիններին: Վերջիններս միշտ չէ, որ կարողանում են բավարարել այդ ծառայությունների պահանջարկը:⁶ Մանկապարտեզներում ուղղակիորեն գրպանից կատարվող (ՈւԳԿ) բարձր վճարները և անորակ շենքային պայմաններն ու օգտագործվող նյութերը նույնպես նպաստում են նախադպրոցական ծառայություններից օգտվողների ընդգրկվածության ցածր մակարդակին (ILCS 2009 թ


⁶ Յան վան Ռավենս (2008), «Հայաստանում վաղ մանկական զարգացման սցենարները-ՀՀ Ազգային նախադպրոցական կրթության, քաղաքականությունների և ռազմավարությունների ֆինանսական և իրավաբանական վերլուծությունը»; ՄՄԿ-ի մանկական հիմնադրաՄՈՒՆԻՍԵԲ/.

համաձայն, 2009 թ-ին կազմել է, մոտ 20%): Հետևաբար, երկրում երեխաների խնամքի ծրագրերի որակի ու մատչելիության գնահատումը և այդ ծառայությունների ընդլայնման համար տարբերակների մշակումը կարող են օգնել աշխատուժի մասնակցության ավելացմանը: Այդպիսի ծրագրերը կարող են ծառայել Հայաստանի տնտեսության ինչպես ներկա, այնպես էլ ապագա կարիքների բավարարմանը; կարճաժամկետ առումով՝ դրանք կարող են ավելի շատ հայ կանանց հնարավորություն տալ միանալու աշխատուժին, իսկ երկարաժամկետ առումով՝ վաղ մանկության զարգացման վրա կատարվող ներդրումները կարող են հանգեցնել ավելի արդյունավետ աշխատողների ձևավորմանը, այդպիսով նաև՝ արագ աճի:

21. Գործազրկությունը՝ մասնավորապես երիտասարդության, նշանակում է՝ Հայաստանում ավելի ու ավելի սակավացող մարդկային կապիտալի ռեսուրսների անբավարար մակարդակի օգտագործում: 2009 թ. դրությամբ գործազրկության


ընդհանուր մակարդակը (համաձայն ԱՄԿ սահմանման) կազմել է 18.5%՝ աշխատուժի 15 և ավելի տարիքի սանդղակում գտնվողների համար: Մինևույն ժամանակ, գործազրկության մակարդակը 15-24 տարիքային խմբում շատ ապշեցուցիչ 40,6% է (տես՝ գծապատկեր 12): Գործազրկության նման բարձր տեմպերը աշխատանքի շուկայում առկա լուրջ խնդիրների մասին են վկայում, ինչը կարող է լինել աշխատանքային հմտությունների և տվյալ աշխատանքի անճիշտ համադրության կամ էլ անբավարար աշխատատեղերի ստեղծման հետևանք: Ավելի ընդգրկուն ուսումնասիրության անհրաժեշտություն կա՝ գնահատելու համար աշխատանքային շուկայում հմտությունների սխալ համադրության տարածվածության աստիճանը և տեղեկատվության ասիմետրիաները: Նման վերլուծությունը կարող է օգնել կառավարությանը ձևավորելու հստակ միջամտություններ, որոնք կարող են մեղմել գործազրկությունը: Գործազրկության կրճատմանը կնպաստի նաև Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավման միջոցառումների արդյունքում աշխատուժի ընդհանուր աճի պահանջարկը: 2009 թվականի «Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտությամբ» (BEEPS) պարզվել է, որ հայկական ընկերությունների կողմից երեք ամենամեծ խոչընդոտներն են համարվում.՝ են՝ (i) ոչ-պաշտոնական ոլորտում գործող հարաբերությունները, (ii) հարկերի բարձր դրույքաչափերը, և (iii) քաղաքական անկայունությունը (Համաշխարհային բանկ և ՎՋԵԲ ; 2009 թ.): Այս մարտահրավերներին համապատասխան լուծումներ տալը կարող է խթանել աշխատատեղերի ստեղծումը և դրանով իսկ բարելավել մարդկային ռեսուրսների օգտագործումը Հայաստանի տնտեսության մեջ:

Գծապատկեր 12-Հայաստանում գործազրկության մակարդակն ըստ տարիքային խմբերի, 2009



22. Ի հավելումն աշխատանք ունեցող հայերի թվի բացարձակ աճի ապահովման, աշխատուժի արդյունավետության բարելավմանն ուղղված միջոցները կարող են օգնել մեղմելու ժողովրդագրական փոփոխությունների հետևանքները: Իրոք, տնտեսական աճը պահպանելու համար՝ աշխատուժի մատակարարման աճին կարող է փոխարինել աշխատանքի արտադրողականության աճը: Աշխատանքի արտադրողականության բարելավումների կարելի է հասնել ավելի լավ կրթված և ավելի ճկուն աշխատուժի, յուրաքանչյուր աշխատողի կողմից տեխնոլոգիաների առավել արդյունավետ օգտագործման և աշխատողների հմտությունների ու աշխատատեղերի ավելի լավ համադրման շնորհիվ: Այս առումով կարևորվում է կրթական համակարգի որակի հարցը և թե, որքանով է դա արձագանքում աշխատաշուկայի պահանջներին: Գծապատկեր 13-ը ցույց է տալիս, որ հետմիջնակարգային կրթությամբ աշխատանքային տարիքի աշխատունակ չափահասները ավելի քիչ հավանական է, որ ընդգրկվեն ոչ-պաշտոնական աշխատանքների ոլորտում, ինչը հայտնի է որպես պակաս արդյունավետ ոլորտ:

Գծապատկեր 13- Ըստ կրթական մակարդակների ոչ-պաշտոնական զբաղվածությունը Հայաստանում, 2009




23. Ամենաերիտասարդ հայերին ուղղված սոցիալական ծրագրերը, բացի իրենց՝ աճի ընդլայնման ներուժից, կարող են կարևոր ներդրում դառնալ «հնարավորության հավասարության» ապահովման առումով: Վաղ մանկության շրջանում կրթական ձեռքբերումներին և ապագա վաստակին նպատակուղղված միջամտությունների հետ-վերադարձի դրույքաչափերը գնահատվում են զգալիորեն ավելի բարձր, քան դպրոցական տարիքում արվածները, որոնք էլ իրենց հերթին ավելի բարձր են գնահատվում, քան երիտասարդների կամ մեծահասակների շրջանում արված միջամտությունները: Ավելին, վաղ մանկության զարգացմանն ուղղված ներդրումները հաջորդ սերնդի հայերի համար խաղի պայմանները հավասարեցնելու ներուժ ունեն: Հայաստանում, ինչպես այլուր, կյանքի հնարավորությունները հաճախ ենթարկվում են անհատի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքների վիթխարի ազդեցությանը: Օրինակ, կա տարածական հարթություն՝ որոշակի մարզերում աղքատության մակարդակը զգալիորեն ավելի բարձր է (օր.՝ Շիրակի): Առկա է նաև ուժեղ միջ-սերնդային ուղին՝ այն տնային տնտեսություններում, որտեղ որևէ մեկը ստացել է բարձրագույն կրթություն կիսով չափով փոքրանում է աղքատության ռիսկը համեմատած այլ տնային տնտեսությունների հետ. այս գործոնը տնային տնտեսություններում երեխաների վերահսկողությունից դուրս է: Այն ըմբռնումը, որ աղքատության պատճառը շատ ավելին է, քան պարզապես անհատական ջանքեր չգործադրելը, հաստատվում է նաև Հայաստանի բնակիչների կողմից՝ ընդամենը 15%-ն է աղքատության առկայությունը վերագրել "ծուլությանը և

կամքի ուժի բացակայությանը», իսկ 62%-ը նշել է «հասարակության մեջ անարդարության առկայությունը», կամ «ոչ-հաջողակ լինելը»:⁷

24. Թեև երիտասարդների վրա կատարված ներդրումներն ունեն ամենաբարձր վերադարձելիությունը, աշխատանքի արտադրողականությունը կարող է նաև բարձրացվել մեծահասակների կրթության և աշխատանքային տարիքի բնակչության ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման ծրագրերի միջոցով, որոնք օգնում են աշխատողներին արդիականացնելու իրենց հմտությունները: Ներկայումս չափահաս բնակչության ընդամենը շուրջ 1.5% -ն է մասնակցում որակավորման բարձրացման և վերամասնագիտացման դասընթացներին: Սակայն ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ներկայումս զբաղվում է ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման ռազմավարություն վրա: Քանի որ աղքատներն ավելի ցածր կրթական մակարդակ ունեն, նման ծրագրերի ծախսարդյունավետությունը կարող է բարելավվել առավելագույն հասցեականության ապահովման միջոցով (Գծապատկեր 14): Ամբողջ կյանքի ընթացքի համար նախատեսված ուսումնական ծրագրերը կարող են մշակվել աշխատուժի պահանջարկի, ինչպես նաև թիրախային բնակչության հմտությունների մանրակրկիտ վերլուծությունից հետո:

Գծապատկեր 14: Աշխատանքային տարիքի աշխատունակ չափահասների կրթությունը, ըստ սպառման քվանտիլի



25. Ամփոփելով, աղքատության կրճատման քաղաքականությունները, որ միտված են հնարավորությունների հավասարեցման բարելավմանը, մասնավորապես երիտասարդության շրջանում արժանի և լուրջ քննարկման: Սա կարող է հանգեցնել այնպիսի տարբերակների ուսումնասիրության, որոնք սոցիալական ծախսերի

⁷ Համաշխարհային Բանկ-ԵԶՎԲ (EBRD) հետազոտություն «Կյանքն անցումնային ժամանակահատվածում», 2007.

առավել մեծ մասը կուղղորդեն երիտասարդ տարիքային խմբերին, մասնավորապես կենտրոնանալով վաղ մանկության զարգացման ծրագրերի վրա: Հայաստանի կառավարությունը Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ արդեն աշխատում է վաղ մանկության զարգացման ծառայությունների որակի և մատչելիության բարելավման վրա, և այս հարցը կարևորվել է 2008-2015թթ. նախադպրոցական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացման Հայաստանի ռազմավարական ծրագրում: Այս ուղղվածությամբ այլ քաղաքականությունները, որոնց շուրջ թերևս խորհրդածել են, ներառում են ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման և ակտիվ աշխատաշուկայի ծրագրերը: Ավելի խորը վերլուծական աշխատանք պետք է կատարվի՝ մատնանշելու համար այն հատուկ միջամտությունները, որ լավագույնս կարող են նպաստել աշխատուժի մասնակցությանը, կրճատել գործազրկությունը և խթանել աշխատուժի արտադրողականության աճը:


IV.2 Կենսաթոշակների և առողջապահության ֆինանսական կենսունակությունը

26. Հաջորդ մի քանի տասնամյակում, Հայաստանում կսկսվի արձանագրվել կախվածության հարաբերակցության բարձրացում, ինչն այժմ պատմական ամենացածր կետի վրա է: Առաջիկա տարիներին մեկ աշխատակցի հաշվով ավելի մեծ թվով տարեց մարդկանց հարաբերակցությունը կարող է ունենալ էական հետևանքներ Հայաստանում սոցիալական ծախսերի ֆինանսական կայունության առումով: Բյուջետային տեսանկյունից երկու խոշոր ծրագրերն են տարիքային կենսաթոշակներն և առողջապահականը: Հաջորդ բաժինը ներկայացնում է այս ծրագրերի վրա հնարավոր ճնշումների համառոտ վերլուծությունը, հաշվի առնելով ակնկալվող ժողովրդագրական փոփոխությունները:

27. Հայաստանի բնակչության ծերացումն արդեն իսկ լարվածություն է ստեղծում երկրի կենսաթոշակային համակարգի համար: Կենսաթոշակային համակարգի կախվածության հարաբերակցության չափսը սահմանվում է որպես բոլոր կենսաթոշակատուների (տարեցներ, հաշմանդամներ, այրիացածներ) և ներդրում կատարողների թվի հարաբերակցություն: 2008թ. դրությամբ Հայաստանում կենսաթոշակային համակարգի կախվածության մակարդակը կազմել է 106%, ինչը, տարածաշրջանի ԵԿԱ այլ երկրների հետ համեմատած շատ բարձր է:⁸ Ներդրում կատարողների տարիքային պրոֆիլը Հայաստանում շեղված է դեպի ավելի տարիքով աշխատողները, ինչը նշանակում է նոր կենսաթոշակատուների թվի ահագնացող աճ առաջիկա 15 տարիների ընթացքում: (տես՝ Գծապատկեր 15/ Գծապատկեր 15).

⁸ Համաշխարհային Բանկի «Կարմիրից դեպի մոխրագույն» (From Red to Gray) հաշվետվությամբ ներկայացված միջին ցուցանիշը 64% է (Գծապատկեր 4.1)

Գծապատկեր 15- Հայաստանում ներդրում կատարողներն ըստ տարիքի և սեռի, 2008



Գծապատկեր 1-ում պատկերված հիմնական ժողովրդագրական միտումները, մասնավորապես, աշխատանքային տարիքի բնակչության թվի ակնկալվող անկումն ու տարեց բնակչության թվի ավելացումը կուծեղացնեն ճնշումը կենսաթոշակային համակարգի վրա: Օգտագործվել է Համաշխարհային Բանկի Կենսաթոշակային բարեփոխումների տարբերակների սիմուլյացիայի գործիքակազմը (PROST) (Pension Reform Options Simulation Toolkit) վերլուծելու համար Հայաստանում ընթացիկ աշխատավարձերից կատարվող հարկային պահումների (PAYG) (pay-as-you-go) միջոցով ֆինանսավորվող կենսաթոշակային համակարգի կենսունակությունը:⁹ PROST վերլուծությունն օգտագործել է.՝ (i) Ազգային վիճակագրական ծառայության 2008թ. վարչական տվյալները՝ ժողովրդագրական և աշխատաշուկայի կանխատեսումների մասին (ii) մակրոտնտեսական կանխատեսումների վերաբերյալ միջնաժամկետ ծախսերի ծրագրի տեղեկությունները; և (iii) Սոցիալական ապահովության պետական ծառայության կենսաթոշակային համակարգի ցուցանիշների և չափանիշների մասին տվյալները:¹⁰ Համարյա բոլոր PROST

⁹ Համաշխարհային Բանկի Կենսաթոշակային բարեփոխումների տարբերակների սիմուլյացիայի գործիքակազմը (PROST) համակարգչային միջոց է, օգտագործվում է որոշակի ժամանակահատվածի կտրվածքով կենսաթոշակային համակարգի սիմուլյացիաներ անելու համար: Այն կիրառվել է ավելի քան 90 երկրում, բավականին ճկուն է տարբեր բարեփոխումների համադրման և համակարգի վրա դրանց ունեցած ազդեցությունների, կենսունակության, կենսաթոշակային եկամտի մակարդակի, և կառավարության պարտավորությունների գնահատման առումներով:


¹⁰ Մինչև 2008թ-ն Հայաստանի սոցիալական պաշտպանության ոլորտը ֆինանսավորվել է պետ.բյուջեից, (սոցիալական աջակցության, սոցիալական նպաստների ծառայություններ, ներդրումների վրա չհիմնված սոցիալական կենսաթոշակներ և զինվորական թոշակներ) և Սոցիալական ապահովագրության հիմնադրամի կողմից) (աշխատանքային կամ ապահովագրված

սիմուլյացիաները բավականին լավատեսական ժողովրդագրական սցենարով են կազմվել, համարելով որ, կարձանագրվի ծնելիության աճ և զրոյական զուտ միգրացիա 2030թ.-ից հետո:

Բազային սիմուլյացիան առկա կենսաթոշակային օրինաչափություններում ոչ մի փոփոխություն չի ենթադրել, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված կանանց կենսաթոշակային տարիքի ավելացումը մինչև 63-ի, 2011թ.-ին:

Կենսաթոշակի անցնելու միջին աշխատանքային ստաժը, հաջորդ 10 տարիների ընթացքում, ենթադրվել է, որ, կշարունակի իր վերջին ժամանակահատվածում դրսևորվող նվազման միտումը, որից հետո կկայունանա: Հաշվի առնելով այդ ենթադրությունները, սիմուլյացիան կանխատեսում է ընդհանուր համակարգի կախվածության ցուցանիշի աճ (տես Գծապատկեր 16/ **Error! Reference source not found.**).

Գծապատկեր 16-Հայաստանում համակարգի կախվածության կանխատեսվող հարաբերակցության մակարդակը, 2008-2050



30. Հայաստանի Կառավարությունը քաղաքականության երկրնտրանքի առջև է կանգնած, այն է՝ ինչպես ճիշտ հավասարակշռել կենսաթոշակատուներին ողջամիտ կենսամակարդակ ապահովելու և կենսաթոշակային համակարգի կենսունակությունը ապահովելու աշխատանքները: 2009թ. կենսաթոշակային

թոշակներ, գործազրկության և ժամանակավոր անաշխատունակության նպաստներ): 2008թ. հունվարից սկսած, Սոցիալական ապահովագրության հիմնադրամը վերակազմավորվել է Պետական սոցիալական ապահովության ծառայության, ինչը նշանակում է, բոլոր սոցիալական ներդրումներն ուղղորդվում են պետական բյուջե, և սոցիալական պաշտպանության բոլոր ծրագրերը, ներառյալ նաև, այսպես կոչված ապահովագրված թոշակները (կամ ներդրումների վրա հիմնված թոշակները) ուղղակիորեն ֆինանսավորվում են պետական բյուջեից:

փոխարինման միջին մակարդակը (սահմանվում է, որպես միջին կենսաթոշակային չափսի հարաբերակցությունը միջին աշխատավարձին) շատ ցածր է եղել, կազմելով շուրջ 26%.¹¹ Կենսաթոշակների արժեքն ավելացնելու համար միջնաժամկետ ծախսերի ծրագրով Հայաստանի Կառավարությունը կենսաթոշակի չափսի համար որպես թիրախ սահմանել է նվազագույն սպառողական զամբյուղի տոկոսը:¹² Այդ կանխատեսվող թիրախների ապահովմամբ, մինչև 2025թ.-ն փոխարինման միջին մակարդակը կբարձրացվի մոտավորապես միջին աշխատավարձի 30%-ի չափով (տես Գծապատկեր 17/ Գծապատկեր17): Սակայն, 2025թ. հետո, գնաճով պայմանավորված՝ կենսաթոշակային նպաստների ծրագրված ինդեքսավորումը կփոշիացնի կենսաթոշակների իրական արժեքը, փոխարինման մակարդակի անկումը 2050 թ.-ին հասցնելով միջին աշխատավարձի 10% -ից պակասին¹³: Ընդհանուր կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունն ավելի շուտ կարող է բարելավվել ոչ թե աշխատավարձի, այլ գների ինդեքսավորմամբ, քանի որ ընդհանուր առմամբ աշխատավարձերի աճը գների աճից դանդաղ է տեղի ունենում:


Գծապատկեր 17-ում մատչելի փոխարինման ցուցանիշը ուրվագծում է այն ցուցանիշը, որը կհանգեցնի կենսաթոշակային համակարգի ընթացիկ զրոյական հաշվեկշռի: Երբ բարձրացվում է կենսաթոշակի արժեքը՝ ապահովելու համար միջնաժամկետ ծախսերի ծրագրի նպատակների իրականացումը, համակարգը մուտք է գործում դեֆիցիտի տարածք, սակայն, երբ կենսաթոշակները ինդեքսավորվում են գնաճով, համակարգն աստիճանաբար միտվում է ավելցուկի:

¹¹ OECD –SՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության) երկրներում փոխարինման համախառն նվազագույն տոկոսը կազմել է 31% (Միացյալ Թագավորության համար), մինչդեռ ԵԿԱ տարածաշրջանում՝ Չեխիայի հանրապետությունում, Հունգարիայում, Լեհաստանում և Սլովակիայի Հանրապետությունում փոխարինման մակարդակը 50-77% է (OECD 2009).

¹² Ապահովագրված կենսաթոշակների միջին չափսը պետք է առնվազն հասնի սպառողական նվազագույն զամբյուղի (ՄՆԶ) 100%-ին մինչև 2017թ.-ն, ՄՆԶ առնվազն 150% -ին մինչև 2021թ.-ն; բազային կենսաթոշակի չափսը պետք է առնվազն հասնի ՄՆԶ 100% -ին մինչև 2020թ., և ՄՆԶ -ի առնվազն 120% -ին մինչև 2021թ.: Սրանք վերնայված ժամկետներն են, որոնք հաշվի են առնում համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո Հայաստանում արձանագրված անկումը

¹³ Փոխարինման մակարդակի նվազման նպաստող մեկ գործոն էլ 2013թ.-ից ներդրվող միասնական եկամտահարկն է, և լավատեսական այն ենթադրությունը, որ գործատուները կփոխանցեն իրենց նախկին ներդրումների ամբողջական գումարը աշխատողների աշխատավարձին: Այս ենթադրությունը հանգեցրել է աշխատավարձերի արհեստական բարձր աճի (մոտ 20%) 2013թ.-ին՝ ներագրելով կանխատեսման մնացած ժամանակահատվածի միջին աշխատավարձերի մակարդակի վրա:

Գծապատկեր 17- Տարիքային կենսաթոշակատուների կանխատեսվող միջին փոխարինման ցուցանիշը (միջին աշխատավարձի %), 2008-2050 (հիմնական սցենար)




30. 2010թ. դեկտեմբերին, Հայաստանի Ազգային ժողովն ընդունել է կենսաթոշակային բարեփոխումների օրենքների մի նոր փաթեթ: Ակնկալվում է, որ նոր օրենքները կհանգեցնեն նոր հիմնասյան մասնակիցների փոքր-ինչ բարձր փոխարինման ցուցանիշների՝ կենսաթոշակային համակարգի ներկայիս ավելցուկի ցածր մակարդակի հաշվին: Սպասվում է, որ բարեփոխումն ուժի մեջ կմտնի 2013թ.-ին. հիմնական փոփոխությունը կլինի երկրորդ պարտադիր ֆինանսավորվող սյան ներդրումը:¹⁴ Ֆինանսավորվող սյան մասնակիցների հետագա կենսաթոշակային նպաստները կազմված կլինեն բազային կենսաթոշակից և անձնական հաշիվներից ծրագրավորված պահումներից կամ տարեկան վճարումներից (annuities):¹⁵

¹⁴ 16-40 տարեկան աշխատողները անցում կկատարեն ֆինանսավորվող սյանը, իսկ առկա կենսաթոշակատուների և 41+ բարձր տարիքի աշխատողների համար կենսաթոշակային նպաստները կշարունակեն կազմված լինել բազային կենսաթոշակից և տարվա արժեքի մասից: Կուտակման տոկոսադրույքը ֆինանսավորվող սյան համար կլինի 10%, որից կառավարությունը ստանձնել է 5% համաֆինանսավորումը՝ մինչև 25,000 դրամ, իսկ աշխատողը պատասխանատու է մնացյալի համար: Սա նշանակում է, որ 500,000 դրամից բարձր աշխատավարձ ունեցողներն իրենց եկամտի ավելի քան 5% տոկոսը պետք է վճարեն՝ ապահովելու համար 10% կուտակման ցուցանիշը:

¹⁵ Այն անհատների համար, որ մինչև 2014թ. են վաստակել կենսաթոշակային իրավունքը, այդ նպաստները նաև կլրացվեն տարեկան արժեքի մասով՝ հիմնված բարեփոխումներին նախորդող այն տարիների թվի վրա, որոնք այդ մասով ներառնված են եղել: Պարտադիր աշխատանքային ստաժի ապահովագրված տնտեսությունը ներդրումային կենսաթոշակ ստանալու համար (ի տարբերություն

Ֆինանսավորվող կենսաթոշակներով առաջին անգամ կենսաթոշակի անցնողների նպաստները փոքր-ինչ ավելին կլինեն, քան PAYG (pay-as-you-go) միջոցով ֆինանսավորվող նպաստները (համապատասխանաբար ունենալով 17.2% և 15.9% փոխարինման ցուցանիշ)。¹⁶ Մակայն, քանի որ PAYG նպաստների արժեքը գնաճի ինդեքսավորման արդյունքում պակասում է, ֆինանսավորվող նպաստների արժեքը շատ ավելի դանդաղ է պակասում, այնպես որ փոխարինման ցուցանիշների տարբերությունը շարունակում է աճել (տես՝ Գծապատկեր 18/ Գծապատկեր 18)։

Գծապատկեր 18- Տարեց կենսաթոշակառուների կանխատեսվող փոխարինման միջին ցուցանիշները (միջին աշխատավարձի %), 2008-2025 (Բարեփոխումների սցենար)



31. Առողջապահության ոլորտում գնային ճնշումների մասին մտահոգությունները հաճախ նաև առաջանում են բնակչության ծերացման համատեքստում: Մովորաբար տարեցների առողջությունն է անբավարար լինում, հետևաբար նրանք ավելի շատ են բուժօգնության կարիք ունենում,: Հայաստանում 50+ տարիքային խումբը առողջապահական նպատակներով ծախսում է երկու անգամ ավելի շատ, քան 18-49

սոցիալական կենսաթոշակի) պետք է աստիճանաբար բարձրացվի, ու մինչև 2018թ.-ն 5 տարուց հասցվի10-ի:

¹⁶ Այս հաշվարկը ենթադրում է, որ ներդրման տարեկան իրական վերադարձի տոկոսադրույքը 4% է 2014-2017թթ., 3%՝ 2018-2022թթ., և 2%՝ 2023-2080թթ., իսկ հիմնադրամի կառավարման տարեկան վճարը կազմում է ներդրումների 1.5%-ը:


տարիքային խումր:¹⁷ Բնակչության ծերացմանը համընթաց կավելանան նաև ընդհանուր առողջապահական ծախսերը:

33. Մակայն, միջազգային գրականությունը փաստում է, որ բնակչության ծերացումը սովորաբար ժամանակի ընթացքում աճող առողջապահական ծախսերի առանցքային պատճառը չէ: Թեև ծերացող բնակչությունը նպաստում է առողջապահական ծախսերի ավելացմանը, սակայն, դա աստիճանաբար է տեղի ունենում: Հետևաբար, դրանով չի կարող բացատրվել ժամանակի ընթացքում ամբողջ աշխարհում առողջապահական ծախսերի զգալի ավելացումը: Առկա են ավելի նշանակալի գործոններ՝ մասնավորապես, նոր տեխնոլոգիաների ներդրումն ու ապահովագրական ծածկույթի ընդլայնումը: Այս գործոնները կարող են բարձրացնել այն գումարները, որ կծախսվեն հինգ տարի հետո 65 տարեկան անձի համար, ի տարբերություն այն գումարների, որ այսօր է ծախսվում 65 տարեկան անձի համար: Այս գործոնները առաջիկա տարիների ընթացքում Հայաստանի համար հատկապես կկարևորվեն, քանի որ նույնիսկ բազային նպաստների փաթեթի համար էլ ուղղակի գրպանից կատարվող էական վճարումներ են կատարվում, իսկ տեխնոլոգիաների առկայության առումով, (օր.՝ սիրտանոթային հիվանդությունների կամ քաղցկեղի բուժման համար) շատ հետ են Եվրոպայից և ԱՄՆ-ից: Մակայն, ի տարբերություն, ծերացումով պայմանավորված ծախսերի, այս ծախսերի վրա միանգամայն հնարավոր է ներազդել քաղաքականություններով՝ բնակչության ընդգրկվածության և նպաստների փաթեթի խելամիտ ընդլայնումը կարող է ապահովել, որ ծախսերի ավելացումները լինեն կառավարելի՝ առկա բյուջեի սահմաններում:

33. Գծապատկեր 19-ում ներկայացված են մի քանի պարզ կանխատեսումներ, որ պատկերում են ծերացման և այլ գործոնների հնարավոր ազդեցությունը Հայաստանի հետագա առողջապահական ծախսերի վրա: 2010թ-ին Հայաստանում առողջապահության համակարգում պետական ծախսը կազմել է ՀՆԱ-ի 1.6% -ը: Եթե մեկ շնչի հաշվով պետական ծախսը շարունակի աճել ՀՆԱ-ի աճին համընթաց մինչև 2030թ.-ն, բնակչության ծերացումը միևնույն է կնշանակի, որ ավելանալու են առողջապահության ծախսերը՝ հասնելով ՀՆԱ-ի մոտ 1.8% -ին: Մակայն, եթե այլ գործոնները, ինչպիսիք են տեխնոլոգիաները և ապահովագրությունը, հանգեցնեն՝ մեկ անձի համար 1 կամ 2 տոկոսային կետով բժշկական ծախսերի ավելի արագ աճի, քան ՀՆԱ – ի աճն է, պետական առողջապահական ծախսերն էլ համապատասխանաբար կավելանան կազմելով ՀՆԱ - ի 2.2% կամ 2.7% -ը: Հետևաբար, տարիքի հետ չկապված գործոններն, ամենայն հավանականությամբ, ավելի կարևոր շարժիչ ուժ են՝ Հայաստանի առողջապահական ծախսերի աճի առումով, քան բնակչության ծերացումն, ինքնին:



¹⁷ Այս գնահատումները հիմնված են հետազոտության տվյալների վրա, որն արձանագրում է ուղղակի գրպանից կատարվող ծախսը, ինչը կազմում է Հայաստանում առողջապահական ընդհանուր ծախսերի մոտ 2/3 –ը: Ենթադրվում է, որ համանման ծախսային ցուցանիշ՝ ըստ տարիքային տարբերակման վերագրելի է նաև կառավարության կողմից ծածկվող ծախսերի մասնաբաժնին:

Գծապատկեր 19- Ծերացումն ու առողջապահական ծախսերը Հայաստանում (ՀՆԱ-ի %)



34. **Ներկայումս առողջապահական ծախսերը ֆինանսական կենսունակության համար մեծ մարտահրավեր չեն ներկայացնում;** առաջնահերթությունը կարող է տրվել հասանելիության բարելավմանը և աղքատների կողմից ուղղակի գրպանից կատարվող վճարումների կրճատմանը: Ամբուլատոր և հիվանդանոցային ծառայություններից օգտվելու ցուցանիշները ներկայումս անհամեմատ ցածր են աղքատների մոտ: Գծապատկեր 20-ը վկայում է, որ ամենահարուստ քվանտիլի անձինք այցելում են առողջապահական հաստատություններ մոտ երկու անգամով ավելի հաճախ, քան ամենաաղքատ քվանտիլի անձինք: Աղքատները նաև ավելի հավանական է, որ որպես առողջապահական ծառայություններից չօգտվելու հիմնական պատճառ նշեն դրանց մատչելիության խնդիրը: Հիմնական նպաստների փաթեթը ներառում է հասցեական ծրագիր խոցելի խմբերի համար, սակայն ֆինանսավորման մակարդակը համեստ է: Այսպիսով, աղքատների համար առողջապահական ծառայությունների հետագա մատչելիությունը մեծացնելու առումով, զգալի անելիքներ կան; օրինակ, փոխել ծրագրում ընդգրկվելու համար համապատասխանության ներկա սանդղակի միավորները՝ 36-ից իջեցնելով 30-ի (այսինքն, նույնացնել աղքատության ընտանեկան նպաստի ծրագրի ընդգրկման միավորների հետ): Բացի հասանելիությունը բարելավելուց, խիստ նպատակային ջանքերը կօգնեն նաև կրճատելու աղքատների՝ ուղղակիորեն գրպանից կատարվող վճատումները՝ առանց պարտադրելու այն ֆինանսական ճնշումը, որն առկա է համընդհանուր ընդգրկվածության դեպքում:

Գծապատկեր 20- Հայաստանում առողջապահական ծառայություններից օգտվելը ըստ սպառման քվանտիլների



V. Ամփոփում

35. Այս գրության նպատակն էր ներկայացնել Հայաստանի ժողովրդագրական փոփոխությունների ընդհանուր ուրվագիծը և դրանց հետևանքները քաղաքականության վրա՝ աղքատության կրճատման և սոցիալական ծախսերի առումներով: Ակնկալվում է, որ Հայաստանի բնակչության թվաքանակը 2010-2050թթ. ժամանակահատվածում փոքր-ինչ կնվազի; այս միտմանը համընթաց կարճաժամկետային նաև տարեց բնակչության թվաքանակի աճ և աշխատող տարիքի բնակչության թվաքանակի կրճատում: Այս փոփոխությունների հիմնական պատճառը ծնելիության մակարդակի շարունակական անկումն է, աստիճանաբար ավելացող երկարակեցության մակարդակի և արտագաղթի հետ միասին: Ներկայումս, Հայաստանի սոցիալական ծախսերը շեղված են դեպի տարեցների կողմը: Սա զգալիորեն նպաստում է տարեցների աղքատությունը մեղմելուն, սակայն կարող է անհրաժեշտություն առաջանա ավելի շատ ռեսուրսներ ուղղորդելու դեպի երիտասարդներին, ովքեր պետք է աստիճանաբար ավելի ու ավելի բարձր արտադրողականություն ունենան, որ կարողանան տարեց բնակչության ապագայում ստվարացող թվաքանակին ապահովել:

36. Այս գրությունը ներկայացրել է այդ ժողովրդագրական փոփոխություններին առնչվող քաղաքականությունների մի շարք հնարավոր ազդեցությունները, որոնք ավելի խորը վերլուծության կարիք ունեն: Աշխատուժի մասնակցությունն, ըստ միջազգային չափորոշիչների համեմատաբար բարձր է: Մակայն, ակնկալվում է, որ հաջորդ մի քանի տասնամյակների ընթացքում այն կհասնի իր բարձրակետին, ապա կսկսի կրճատվել: Նախադպրոցական հաստատություններ չհաճախող մանկական տարիքի երեխաներ ունեցող տնային տնտեսությունների կանանց ներգրավման

մակարդակը աշխատուժի մեջ ցածր է—հետևաբար, վաղ մանկության զարգացման ծառայություններին ուղղված ներդրումները հնարավոր է լրացուցիչ օժանդակություն համարվեն աշխատուժի համալրման համար: Հայաստանի գործազրկության շարունակական բարձր մակարդակը փաստում է, որ անհրաժեշտություն կա մանրամասն ուսումնասիրելու աշխատանքի առաջարկի և պահանջարկի սահմանափակումները, ինչպես նաև աշխատաշուկայի ներկայիս ծրագրերի արդյունավետությունը: Աշխատողների արտադրողականության հարցը, թերևս, նույնպես կարելի է կարգավորել բարեփոխելով քաղաքականությունները, նախատեսելով առանձնահատուկ միջամտություններ հիմնված ապագայի համատեքստի վերլուծությունների վրա՝ վաղ մանկության կրթության, հիմնական կրթության, ինչպես նաև մեծահասակների կրթության ոլորտներում: Հայաստանի Կառավարությունն իրականացնում է կենսաթոշակային նոր բարեփոխումներ, ինչը նպատակ ունի թե՛ կարճից-միջնաժամկետ առումով բարձրացնել կենսաթոշակների իրական արժեքը, ժամանակ առ ժամանակ բարձրացնելով բազային կենսաթոշակները, և թե՛ երկարաժամկետ առումով կենսաթոշակային համակարգը դարձնել ավելի կենսունակ: Մնում է տեսնել, թե գործնականում ինչպես կիրականացվի բարեփոխումը: Առողջապահական համակարգի ֆինանսական կենսունակության համար, իր այժմյան տեսքով, կարծեք թե, ժողովրդագրական փոփոխությունների արդյունքում որևէ սպառնալիք չկա: Իրականում կառավարությունը կարող է դիտարկել աղքատների համար հասանելիության բարելավմանն ու ուղղակի գրպանից կատարվող վճարումների կրճատմանն ուղղված աշխատանքների համար ավելի շատ միջոցներ հատկացնելու հնարավորությունը:

Հղումներ՝

- Ալմոնդ, Դուգլաս և Ջանեթ Քարրի (2010) «Մարդկային կապիտալի զարգացումը մինչև հինգ տարեկանը»; աշխատանքային փաստաթուղթ 15827
- Almond, Douglas, and Janet Currie (2010). “Human Capital Development before Age Five”. NBER Working Paper 15827.
- Աշխատանքի միջազգային կազմակերպություն (2009) «Տնտեսապես ակտիվ բնակչության գնահատումներ և կանխատեսումներ» (5-րդ խմբագրություն, 2009 հրատարակություն) International Labour Organization (ILO) (2009). *Economically Active Population Estimates and Projections* (5th edition, revision 2009). http://laborsta.ilo.org/applv8/data/EAPEP/eapep_E.html (retrieved October 19, 2010).
- Մեյլե, Ֆրանս, Ժակ Վալլին և Իրինա Բադուրաշվիլի (2007) «Նորածինների սեռերի հարաբերակցության կտրուկ տարբերության աճ Կովկասում; Ինչո՞ւ, Ինչպե՞ս», Իզաբելլ Ատտանե և Քրիստոֆ Գայլմոտո «Հարևանի այգին ջրելը-Ասիայում կանանց ժողովրդագրական դեֆիցիտի աճ» (էջ 73-88), Փարիզ; ժողովրդագրության ոլորտում ազգային հետազոտության միջազգային համագործակցության կոմիտե
- Meslé, France, Jacques Vallin, and Irina Badurashvili (2007). “A Sharp Increase in Sex Ratio at Birth in the Caucasus. Why? How?” In Isabelle Attané and Christophe Z. Guilmoto (eds.), *Watering the Neighbour’s Garden: The Growing Demographic Female Deficit in Asia* (pp. 73-88). Paris: Committee for International Cooperation in National Research in Demography.
- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (2009)- «Կենսաթոշակները մեկ հայացքով 2009; կենսաթոշակային և եկամտային համակարգերը ՏՀԶԿ երկրներում»
- Organization for Economic Co-operation and Development (OECD) (2009). *Pensions at a Glance 2009: Retirement-Income Systems in OECD Countries*.
- Ռաջարանթամ, Ջուլի Կնոլլ, Ջեյք Ռ. Մարկուս, Էլիսոն Լեվին-Ռեկտոր, Հնդդյու Չալուպկա, Հայդոնգ Վանգ, Լաուրա Դվույեր, Մեգան Կոստա, Ալան Դ. Լոպեզ, Քրիստոֆեր ՋԼ Մուրրայ (2010) «15-50 տարեկան կանանց և տղամարդկանց համաշխարհային մահացության ցուցանիշը 1970-2010թթ.-համակարգված վերլուծություն», Լանցետ, 375 (9727): 1704-1720
- Rajaratnam, Julie Knoll, Jake R Marcus, Alison Levin-Rector, Andrew N Chalupka, Haidong Wang, Laura Dwyer, Megan Costa, Alan D Lopez, Christopher JL Murray (2010). “Worldwide mortality in men and women aged 15-59 years from 1970 to 2010: A systematic analysis.” *Lancet* 375 (9727): 1704-1720.

ՄԱԿ (2008)-Համաշխարհային բնակչության հեռանկարները-2008թ. վերանայված հրատարակություն, ՄԱԿ-ի քարտուղարության Տնտեսական և սոցիալական հարցերով վարչության բնակչության հարցերով ստորաբաժանում
UN (2008). World Population Prospects: The 2008 Revision. Population Division of the Department of Economic and Social Affairs of the United Nations Secretariat. <http://esa.un.org/unpp> (retrieved October 18, 2010).

Վան Ռավենսա, Յան (2008) – Հայաստանի Հանրապետությունում վաղ մանկական զարգացման սցենարները-Ազգային նախադպրոցական կրթական ծրագրերի, քաղաքականությունների և ռազմավարությունների ֆինանսական և իրավաբանական վերլուծությունը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Հայաստան
van Ravens, Jan (2008). *Scenarios for Early Childhood Development in Armenia: Financial and Legal Analysis of National Preschool Education Programmes, Policies and Strategies in the Republic of Armenia*. UNICEF-Armenia.

Վիեյ Շանգ-ժին և Խիաոբո Շանգ (2009) - «Մրցակցային խնայողության մոտիվը-Վկայություններ Չինաստանում աճող սեռային հարաբերակցության և խնայողությունների մակարդակի մասին», Աշխատանքային փաստաթուղթ 15093
Wei, Shang-Jin. and Xiaobo Zhang (2009). “The Competitive Saving Motive: Evidence from Rising Sex Ratios and Savings Rates in China.” NBER Working Paper 15093.

Համաշխարհային Բանկ (2010)- Թուրքիա-Ընդլայնելով հնարավորությունները հաջորդ սերնդի համար-Հաշվետվություն կյանքի հնարավորությունների մասին, Վաշինգտոն, Համաշխարհային Բանկ
World Bank (2010). *Turkey: Expanding Opportunities for the Next Generation: A Report on Life Chances*. Washington, DC: The World Bank.

Համաշխարհային Բանկ (2007) «Կարմիրից դեպի մոխրագույն» Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության ծերացող բնակչության «երրորդ անցումը» Վաշինգտոն, Համաշխարհային Բանկ
World Bank (2007). *From Red to Gray: The “Third Transition” of Aging Populations in Eastern Europe and the former Soviet Union*. Washington, DC: The World Bank.

Համաշխարհային Բանկ և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (2009), Հայաստան- Երկրի դիմագիծը-2009, Ձեռնարկությունների հետազոտություն
World Bank and European Bank for Reconstruction and Development (EBRD) (2009). *Armenia: Country Profile 2009*. Enterprise Surveys.

Համաշխարհային Բանկ և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (2007),- Կյանքը անցումնային ժամանակահատվածում- հետազոտության տվյալներ
World Bank and EBRD (2007). *Life in Transition Survey data*.
<http://www.ebrd.com/pages/research/analysis/publications/transition/data.shtml>